

Մեր ազգին մէջ հին սովորոյթը գրեթէ մինչեւ ժԱ զար պահուած կ'երեւի, միայն կիրակի և շաբաթ օրերն էին ծիսական օրերը: Կը համարիմ, որ ինչպէս Տրուդեան ժողովը սահմաներ էր, հայք կանխապէս կը սրբազորէին ըստ բաւականի կիրակի օրերը այնչափ մասեր, որ բաւէին ամբողջ եօթնեկի մը համար: Կը տեսնուի պատմութեան մէջ ինչ ինչ դէպքերէ, որ սրբոց տօնախմբութեան աւուրց' էին ծիսական օրեր, իսկ պահոց օրերը միշտ կը մնային Ոչ-ծիսականք: Բայց բացառութիւնք պէտք էին գտնուիլ հին ատենն ալ, ինչ որ այժմս կը գործադրուի. ննջեցելոց տեարը եթէ փափագին այգալիսի Ոչ-ծիսական օրերու մէջ իրենց հանգուցեալին թաղման հանդիսին համար խնդրել սուրբ Պատարագի հանդիսաւորութիւնը՝ չէ ժրխտուած: Հայ ծիսին մէջ բուն Ոչ-ծիսական օրն է Աւագ Ուրբաթ օրը, իսկ Աւագ շաբաթը ծիսական է, որովհետեւ երեկոյն կը մատուցուի սուրբ խորհուրդը: Հոովմանեան եկեղեցին հիմալ սակել պարզ կանոնի մը վերածնէր է զայս իրականին մէջ, Այժմ միայն Աւագ ուրբաթ օրը կը մնայ, յորում պատարագ չի մատուցուի: Յիսուսի չարչարանաց և խաչելութեան օրուան յիշատակութիւնն ունենալուն համար, Այս կանոնիս կը հետեւի հայ-կաթողիկէ եկեղեցին, այս բացառութեամբ՝ որ Մենդեան ճրագաւոյցի և Զատիկի իրթման պատարագ եթէ համարինք Մենդեան ղեան և Զատիկի աւուրց սկզբնաւորութիւն՝ ըստ արեւելեան արարողութեան՝ այդ օրերն ալ ոչ-ծիսական կը մնան:

Ո. Կ.

Յ Ո Ւ Բ Ն Լ Ե Ա Ն Բ առը

Առաջ եկած է եօպէլ բառն, որ կը նշանակէ խոյ, իսկ փոխաբերական իմաստով՝ եղբնափող, շեփոր: Էբեայք ամէն յիսուն տարի կը կատարէին իրենց յօրեւեանը, յորում կը ծանուցանէին իրոյի եղբիւրով պարտքերու շնորհում, ընծայուած կամ ծախուած երկիրներու վերագործ առ նախկին տէրերը և գերիներու ազատութիւն: Յետոյ այս հանդէսն անցաւ կաթողիկէ եկեղեցւոյ, պահելով միանգամայն սկզբնական անունը:

ՄՊԱՃԱՆԻ ԶԱՃԱՐՄԱՅԱԼ ԳԱՒԱՌԸ

(Աւագ-Պարթև - Պարթև - Պարթև - Պարթև)

(Շաբ. տես թագմ. 1924, էջ 891)

Զարչարանաց շաբաթի աւագ հիւզարարի օրը. — Այդ օրը եկեղեցում պատարագ է լինում և բոլոր գիւղականները ճաշակում են: Երեկոյեան կատարում է «Ոսնալայի» կարգը: Դոյն երեկոյ գիւղացիները, մանաւանդ կանայք, իրենց հետ կարագ, ձու, խունկ և մոմ առնելով՝ շտապում են եկեղեցի: Ոտնալայից յետոյ օրհնած կարագը հէց եկեղեցում բաժանում են ժամաւորներին, որոնք, հայկական սովորութեան համաձայն, քսում են երեսներին և ձեռքերին. ծառայել կարագը և ձու, որ մօտաւորապէս հարիւրի է հասնում, տալիս են քահանային, իսկ խունկ ու մոմը՝ եկեղեցուն:

Հետաքրքրական է նաև այն, որ աւետարանի ընթերցանութեան ժամանակ քահանային նստեցնում են մի քուրսու վրայ և 5-10 երիտասարդներ ծայրերից բռնելով՝ բարձրացնում են օդի մէջ. քահանան երեսը նախ դէպի արևմուտք, ապա դէպի արեւելք դարձած կարգում է աւետարանը և «Եղեցի» ասում: Գիւղացիները փոխաբերական մաքով բացատրում են, թէ Յիսուս բարձրանում է Ձիթենեաց սարը: Այս սովորութիւնը հետզհետէ վերանում է:

Զարչարանաց շաբաթի աւագ ուրբաթ գիշերը. — Աւագ ուրբաթ գիշերին տեղացիները կոչում են «Յուրի Ուրբաթ»: Այդ գիշեր գրեթէ բոլոր գիւղացիները գնում են եկեղեցի, ուր քահանան, ժամեղգութիւնից յետոյ, չորում է գետնի վրայ և մելամաղձոտ ձայնով կարգում է «Ողբ», որի ժամանակ ծեր կանանցից և տղամարդկանցից շատերն արտասում են: Լուսադէմին կանայք գնում են գերեզմանատուն և իրենց հին և նոր ննջեալներին համար պաշտում են կատարել տալիս: Այժմ Զատիկի երկուշաբթի օրն են գնում գերեզմանատուն:

«Ճրագալոյց». — Տեղացիներն ասում են «Ճրագալոյց» կամ «Թաթախ իրիկուն»: Շաբաթ առաւօտեան քահանան գիւղի տներին համապատասխան նշխար պատրաստելով՝ երեք-չորս աշակերտներին ձեռքով բաժանում է ժողովուրդին. ստացողը բաժանող-աշակերտին մի ձու է տալիս, որ պատկանում է քահանային: Երեկոյան բոլոր գիւղացիները շտապում են եկեղեցի: Ա-